# ԿԱՊ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՂՈԹՔ

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին

Մաս 1

*«Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի:»* Փիլիպեցիս 4:6-7

Ներքին խաղաղության բանալին ԱՂՈԹՔՆ է:

*«Արդ, դուք այսպե՛ս աղոթեք."Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի քո անունը:»* Մատթեոս 6:9

## Աստված Անձ է ոչ թե Ուժ

## Մենք կարող ենք կապ ունենալ, հաղորդակցվել Աստծո հետ, որովհետև….

### 1. Աստված Հոգացող Հայր է

*«Ինչպես որ հայրն է գթում իր որդիներին, այնպես Տերն է գթած իրենից վախեցողների հանդեպ:»* Սաղմոս 103:13

*«Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՛ գցեք, որովհետև նա ձեզ հոգ է տանում:»* Ա Պետրոս 5:7

*«Ուրեմն մի՛ մտահոգվեք ասելով՝ ի՞նչ ենք ուտելու...կամ ի՞նչ ենք հագնելու...ձեր երկնավոր Հայրը գիտի, որ դուք այդ ամենի կարիքն ունեք:»* Մատթեոս 6:31-32

### 2. Աստված Անփոփոխ (Հաստատուն) Հայր է

*«Ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ պարգև վերևից է՝ իջած լույսի Հորից, որի մեջ փոփոխում կամ փոփոխման ստվեր բնավ չկա:»* Հակոբոս 1:17

*«Եթե հավատարիմ չմնանք, նա հավատարիմ է մնում, քանի որ ինքն իրեն չի կարող ուրանալ:»* Բ Տիմոթեոս 2:13

*«Աստծու շնորհն ու կոչումը անփոփոխելի են:»* Հռով 11:29

*«Իմ ողորմության Աստվածը կդիմավորի ինձ...»* Սաղմոս 59:10

### 3. Աստված Մտերիմ (Մոտիկ) Հայր է

*«Որպեսզի Աստծուն փնտրեն ու թերևս խարխափելով նրան գտնեն, թեև ինքը մեզնից յուրաքանչյուրից հեռու չէ:»* Գ Ա 17:27

- Նա միշտ հասանելի է ինձ համար

*«Տերը մոտիկ է բոլորին, որ իրեն են կանչում...»* Սաղմոս 145:18

- Նա սիրում է հոգալ իմ կարիքները

*«Արդ, եթե դուք..ձեր զավակներին բարի պարգևներ տալը գիտեք, հապա որքա՜ն առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, ովքեր խնդրում են իրեն:»* Մատթ 7:11

- Նա ցավակից է իմ ցավերին

*«Տերը մոտիկ է սիրտը կոտրվածներին և փրկում է վշտաբեկ հոգիներին:»* Սաղմոս 34:18

### 4. Աստված Իրավասու Հայր է

*«Որովհետև Աստծու համար ոչ մի անկարելի բան չկա:»* Ղուկաս 1:37

*«(Աստված) Բայց նրան, ով մեր մեջ ներգործող զորությամբ կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում:»* Եփեսացիս 3:20

## Աստված ուղարկեց Հիսուսին, որ կապ ստեղծի իր և մարդու մեջ

*«Քանի որ կա մեկ Աստված և մեկ միջնորդ Աստծու ու մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը, որն ինքն իրեն բոլորի համար փրկագին տվեց: Այդպիսին է վկայությունը, որ եղավ իր ժամանակներում:»* Ա Տիմոթեոս 2:5-6

*«Որովհետև ամենքդ Աստծու որդիներ եք Քրիստոս Հիսուսին հավատալով:»* Գաղատացիս 3:26

Հաջորդ Կիրակի

## ՀԱՆՁՆՎԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Ներքին խաղաղության բանալին

Հովիվ Սարօ Խաչիկեան